



HAL
open science

333

-

► **To cite this version:**

| - . 333 . 2015, pp. 428-444. hal-01465372

HAL Id: hal-01465372

<https://hal.science/hal-01465372>

Submitted on 14 Feb 2017

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Աննա Լեյլոյան-Եկմայան

*Փարիզի Արևելյան լեզուների և
քաղաղաքակրթությունների
ազգային ինստիտուտ
(INALCO)*

Փարիզի ազգային գրադարանի թիվ 333 ձեռագրի թվագրման հարցի շուրջ

Փարիզի Ազգային գրադարանի համար 333 Քառավետարանը¹ Յովաննէս Խիզանցու² մեզ հայտնի տասնյոթ ձեռագրերից մեկն է: Ձեռագիրը գրվել և նկարագարով էլ է Վասպուրականում, Խիզանի Սբ. Գամաղիէ վանքում, Յովհաննէս քահանայի պատվերով: Վասպուրականի դպրոցի ավանդույթների համաձայն ավետարանական շարքի մանրանկարները (թ. 2բ — 7բ)³ ներկայացված են մատյանի սկզբում և առաջնորդում են Եվսեբիոս Կեսերացու թղթին (թ. 8ա) ու տասը խորաններին (թ. 8բ — 12ա): Չորս Ավետարաններից յուրաքանչյուրը սկսվում է ավետարանչի պատկերով (թ. 15բ, 91բ, 124բ, 212բ) և տվյալ Ավետարանի անվանաթերթով (թ. 16ա, 92ա, 125ա, 213ա): Ձեռագիրը հարուստ է նաև լուսանցքային մանրանկարներով, լուսանցագարդերով, զարդագրերով: ճոխ նկարագարոված այս մատյանն առ այսօր պահպանել է գրչի և մանրանկարչի, պատվիրատուի, կազմողի, վերականգնողի և հետագա ստացողների հիշատակարանները: Այն բազմիցս ուսումնասիրվել է տարբեր մասնագետների կողմից, ինչպես նաև ձեռագրի ճոխ մանրանկարները հաճախ են զետեղվել զանազան ժողովածուներում և հանդեսներում, սակայն գրեթե բոլորը տարբեր թվական են առաջարկում մատյանի ստեղծման և պատկերագրման համար:

¹ BnF 333, տե՛ս *Kevorkian R. H., Ter Stepanian A. Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale de France. Catalogue. Paris, 1998. P. 937–943.*

² *Քիրոսեան Յ.*, Խիզանի դպրոցի գրիչներն ու մանրանկարիչները, Փարիզ, 1951, էջ 14–21: *Հակոբյան Հ.*, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Երևան, 1982, էջ 83–104, 164–169: *Գեորգեան Ա.*, Հայ մանրանկարիչներ, Մատենագրութիւն, IX–XIX դդ., Գահիրե, 1998, էջ 510–516: *Leyloyan-Yekmalyan A. L'Art du Livre au Vaspurakan; étude des manuscrits de Yovannès Xizanc'i // Bibliothèque de l'INALCO. № 10. Paris-Leuven, 2009. P. 211–212:* Գրիչ և մանրանկարիչ Յովաննէս Խիզանցու անունը գիտական շրջանառության մեջ է մտել զանազան ուղղագրությամբ՝ Հովաննէս, Հովիաննէս, Յովաննէս, Յովիաննէս: Սույն հոդվածում ընդունվել է Յովաննէս (*[jov] [v] [u] [n] [i] [k] [s]*) ձևը, ինչպես գրված է BnF 333 ձեռագրի հիշատակարանում:

³ Ծառնոթ (թ. 2բ), Տեառնընդառաջ (թ. 3ա), Մկրտություն (թ. 3բ), Անդամալույծի բուժումը (թ. 4ա), Այրի կնոջ որդու հարությունը (թ. 4ա), Կոտորումն մանկանց (թ. 4բ), Ղազարոսի հարությունը (թ. 4բ), Մուտք Երուսաղեմ (թ. 5ա), Ոտնվալ (թ. 5ա), Զաբեոս և Քրիստոս (թ. 5բ), Հաղորդություն (թ. 5բ), Մատնությունը (թ. 6ա), Պետրոսի ուրանալը (թ. 6ա), Պիղատոսի դատը (թ. 6բ), Հուդան և քահանայապետը (թ. 6բ), Խաչելություն և Դժոխքի ավերումը (թ. 7ա), Հարություն և Յուդաբեր կանաչք (թ. 7բ):

ԲՆԲ 333 ձեռագրին նվիրված առաջին մեծածավալ հոդվածի հեղինակն է Տանյա Վելմանսը⁴: Վերջինս առաջարկում է 1337 թ. որպես ձեռագրի ստեղծման տարի: Հետևելով իր իսկ առաջարկած թվագրմանը հոդվածագիրը մատյանը վերագրում է ոմն Յովաննէս Խիզանցի առաջինի, որն ըստ Տանյա Վելմանսի, խիզանի դպրոցի ավագ սերնդի ներկայացուցիչ է: Այնինչ, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերի մանրանկարիչը Յովաննէս Խիզանցի երկրորդն է, որը նույն դպրոցի կրտսեր սերնդին է պատկանում: Գրեթե նույն տեսակետն է բաժանում նաև Սիկոլ Թիերրին: Նա առանձին ուսումնասիրություն չունի նվիրված ԲՆԲ 333 Քառավետարանին, սակայն բազմիցս է դրան անդրադառնում՝ Յովաննէս Խիզանցու մեկ այլ գրեթե անհայտ մի Շարակնոց ուսումնասիրելիս⁵: Սիկոլ Թիերրին Յովաննէս (Յովհաննէս) Խիզանցի առաջինին է վերագրում ԲՆԲ 333 և Նոր Զուղայի թիվ 404 Քառավետարանները, համարելով, որ առաջինը ստեղծվել է 1335-ին, իսկ երկրորդը՝ 1362-ին, իսկ Յովաննէս Խիզանցի երկրորդին՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 346, 3717, 898, 8904, 4223, 5562, 5727, 4684, 5444, 8897, 1875, 5458, 6291 ձեռագրերը⁶: Ցավոք, հեղինակը Շարակնոցը չի վերագրում ոչ առաջինին և ոչ էլ երկրորդին: Սիկոլ Թիերրին այն համարում է Մկրտչի և Թանկխաթունի որդիներ, ոմն Յովաննէս (Յովհաննէս) Խիզանցի երրորդ և Զաքարիա Աղթամարցի եղբայրների համատեղ ստեղծագործություն⁷, ինչից ակնհայտորեն երևում է, որ հոդվածագիրը շփոթել է Մկրտչի քահանայի որդիներ Յովաննէս⁸ ու Զաքարա⁹ Խիզանցի և Մկրտչի ու Թանկխաթունի որդիներ Յովհաննէս¹⁰ ու Զաքարիա¹¹ Աղթամարցի եղբայրներին:

Ավելի ուշ, Փարիզի ազգային գրադարանի ձեռագրացուցակում որպես ձեռագրի ստեղծման հնարավոր շրջան առաջարկվել են 1370–1390 թթ., իսկ հիշատակարանում նշված 1335 թվականը համարվել է գաղափար օրինակի ընդօրինակման տարի¹²:

Վերջին տարիներին ԲՆԲ 333 Քառավետարանը հաճախ է ցուցադրվել, ինչպես նաև ընդգրկվել մի շարք ժողովածուներում, որոնք, ցավոք, շարունակում են կրկնել սխալների երկար շարքը: Նշեմ դրանցից մեկ-երկուսը:

⁴ *Velmans T.* Les miniatures inédites d'un manuscrit arménien de la région du Vaspourakan (XIV^e siècle) // CahArch. 1990. Vol. 38. P. 123–158.

⁵ *Thierry N.* Un Hymnaire inédit des frères Yovannès et Zak'ara (Vaspurakan, fin du XIV^e siècle) // RÉArm. 1992. Vol. 23. P. 551–576.

⁶ Հոդվածում Սիկոլ Թիերրին հղում է 1970 թ. սեպտեմբերի 3-ին Ս. Տեր-Ներսեսյանից իրեն հասցեագրված մի նամակ, որը և հիմք է հանդիսացել իր ուսումնասիրության համար (*Thierry N.* Un Hymnaire... P. 551. № 1, 2, 4): Ս. Տեր-Ներսեսյանը, իր հերթին, Վասպուրականի դպրոցի տարբեր ձեռագրեր ուսումնասիրելիս բազմիցս անդրադարձել է ԲՆԲ 333 Քառավետարանին՝ այն թվագրելով միշտ 1335 թ.: Տե՛ս *Der Nersessian S.* The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts. Vol. 2. Dublin, 1958. P. 50–57. Pl. 34b; *Idem.* Feuilletts dispersés d'un Évangile du Vaspurakan // Handes Amsorya. Vienne, 1976. P. 92. Fig. 14; *Der Nersessian S., Mekhitarian A.* Miniatures arméniennes d'Ispahan. Bruxelles, 1986. P. 96, 201–202:

⁷ *Thierry N.* Un Hymnaire... P. 551. № 3.

⁸ *Leyloyan-Yekmalyan A.* L'Art... P. 211–212 (Y-XIV/XV-4), 159 (tableau généalogique I) .

⁹ *Ibid.* P. 219 (Z-XIV/XV-2), 159 (tableau généalogique I).

¹⁰ *Ibid.* P. 160 (tableau généalogique III).

¹¹ *Ibid.* P. 218 (Z-XIV/XV-1), 160 (tableau généalogique III).

¹² *Kevoorkian R. H., Ter Stepanian A.* Manuscrits arméniens... P. 937.

2007-ին Ֆրանսիայում, Հայաստանի տարվա միջոցառումների շրջանակում, Փարիզի Ազգային գրադարանում կազմակերպվեց ցուցահանդես «Livres d'Arménie» խորագրով: Գրադարանի հավաքածուի այլ ձեռագրերի թվում ցուցադրվեց նաև BnF 333 Քառավետարանը: Ինչպես ցուցահանդեսում, այնպես էլ վերջինիս նվիրված գրքույկում, ձեռագիրը կրկին վերգտավ 1335 թվականը որպես ստեղծման տարեթիվ¹³: Նույնը կրկնվեց նաև Mont Saint Michel-ի ձեռագրերի թանգարանում 2012-ին կազմակերպված «Reflets d'Arménie» խորագիրը կրող ցուցահանդեսում¹⁴:

2013-ին մատյանի թվագրմանն է անդրադարձել նաև Ավետ Ավետիսյանը՝ նշելով, որ հիշատակարանում նշված, այս անգամ, 1336 թվականը չի համապատասխանում գրչության իրական ժամանակին: Նա իրավացիորեն այն վերագրում է քաջ հայտնի Յովաննէ Խիզանցուն և հիշատակարանային տեղեկությունների վրա հիմնվելով՝ ենթադրում է, որ ձեռագիրը պետք է ստեղծված լինի Տեր Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսի հայրապետության օրոք (1369–1393 թթ.)¹⁵:

Առաջին անգամ ես անդրադարձա BnF 333 ձեռագրի թվագրման հարցին տարիներ առաջ, երբ առաջարկեցի վերանայել երկու Յովաննէ Խիզանցի մանրանկարիչների գոյության փաստը, ինչպես նաև ոճական և պատկերազրական առանձնահատկությունների հիման վրա Քառավետարանի մանրանկարչությունն ու գրչությունը վերագրեցի Մկրտիչ քահանայի որդի, Յովաննէ Խիզանցուն¹⁶: Հետագայում, Վասպուրականի դպրոցի XIV–XVII դդ. ձեռագրերի ամբողջական դաշտի ուսումնասիրության և հիշատակարանային տվյալների դասակարգման շնորհիվ, հնարավոր եղավ կազմել գրիչների ու մանրանկարիչների կենսագրականները, իսկ առավել մեծ ընտանիքների և խմբերի՝ նաև տոհմաձառերը: Այս ամենը հնարավորություն տվեց առավելագույնս նվազեցնել տարբեր սերնդների գրիչներին ու մանրանկարիչներին միմյանց հետ շփոթելու կամ նույնացնելու խնդիրները, միաժամանակ բացահայտել մի շարք այլ հարցեր և լրացնել բազմաթիվ բացեր: 2003-ին իմ դոկտորական թեզում՝ նվիրված Վասպուրականի դպրոցի գրիչներին ու մանրանկարիչներին¹⁷, ես առաջարկեցի 1393 թ. վերջը — 1394 թ. սկիզբը՝ ելնելով հիշատակարանային տվյալներից և Յովաննէ Խիզանցու այլ ձեռագրերի ոճի համեմատական ուսումնասիրությունից¹⁸:

¹³ Vernay-Nouri A. Livres d'Arménie. Collections de la Bibliothèque nationale de France. Paris, 2007. P. 79. Fig. 35 (a, b, c, d, e), 78, 80–83.

¹⁴ Vardanyan E. Reflets d'Arménie, manuscrits et art religieux // ACHCByz. 2012. № 8. P. 44–47.

¹⁵ Ավետիսյան Ա., Մանրանկարիչ Հովհաննէ Խիզանցի, Մատենադարան, Երևան, 2013, էջ 6–7:

¹⁶ Leyloyan A. Mémoire de DEA, Le manuscrit arménien № 333 de la Bibliothèque nationale de France, sous la direction du professeur J.-P. Mahé. École Pratique des Hautes Études, IV^e section, soutenu en novembre 1997.

¹⁷ Leyloyan-Yekmalyan A. L'École miniaturiste du Vaspurakan: style, iconographie, familles des copistes et des peintres (XIV^e-XVII^e s.). Thèse de Doctorat (sous la direction du professeur J.-P. Mahé). École Pratique des Hautes Études. IV^e section, soutenue le 7 juillet 2003.

¹⁸ Յովաննէ Խիզանցի մանրանկարչի ոճի զարգացման համեմատական աղյուսակները տե՛ս Leyloyan-Yekmalyan A. L'Art... P. 237–238, 239–240:

Ինչպես վերը նշվեց, գրիչ ու մանրանկարիչ Յովաննէս Խիզանցին գրիչ Մկրտիչ քահանայի որդին է: Նա պատկանում է գրիչների և մանրանկարիչների մի մեծ տոհմի, որի հիմնադիրն է Գրիգոր քահանան¹⁹: Գրիգոր քահանան ընտանիքի հոգևոր հայրն է: Վերջինս որդեգրել է Զաքարէ ու Էլիաթուն ամուսինների երկու որդիներին՝ Մկրտչին ու Ստեփանոսին, հիմք դնելով գրիչների և մանրանկարիչների իր ընտանիքին²⁰: Յովաննէս Խիզանցին երրորդ սերնդի ներկայացուցիչ է, սակայն տոհմի առաջին մանրանկարիչն է: Նրա ծննդյան թվականը հայտնի չէ: Հրավարող Հակոբյանը համարում է, որ Յովաննէս Խիզանցին ստեղծագործել է շուրջ հիսուն տարի²¹: Ելնելով այն փաստից, որ նրա վերջին հայտնի ձեռագիրը՝ 1417 թվականին ընդօրինակված ու պատկերազարդված Քառավետարանն է (ՄՄ 5444), կարելի է ենթադրել, որ Յովաննէս Խիզանցին ստեղծագործական ասպարեզ է մտել XIV դ. վաթսունական թվականներին: Հետևաբար, ըստ Հրավարող Հակոբյանի նա ծնվել է երեսնական-քառասնական թվականներին: Ավետ Ավետիսյանը նույնպես ենթադրում է, որ Յովաննէս Խիզանցին ծնվել է XIV դ. երեսնական թվականներին²²: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տոհմի հիմնադիր Գրիգոր քահանայից մեզ հայտնի միակ մատյանը Գամաղիէլի վանքի առաջնորդ Յովհաննէս Բարունու պատվերով, Գրիգոր Նյուսացու «Երգ Երգոցի» մեկնությունն է՝ ընդօրինակված 1367 թ. (ՄՄ 1152), իսկ հորեղբոր՝ Ստեփանոս քահանայից հայտնի երկու Ավետարանները ընդօրինակված են 1365 և 1367 թվականներին (ՄՄ 10829 և ՄՄ 5347), ինչպես նաև այն, որ դրանցում որևէ տեղեկություն չկա Յովաննէս Խիզանցու կամ նրա եղբայրների մասին, նրանց ենթադրությունը գրեթե անհնար է:

Առաջին անգամ 1371-ին է, որ Յովաննէս Խիզանցու հայրը՝ Մկրտիչ քահանան, հիշատակում է իր երկու որդիներին՝ Ովաննէսին (Յովաննէսին) և Զաքարէին, ինչպես նաև իր ընտանիքի այլ անդամներին.

«...Յիշեցէք ի մաքրափայլ և երկնաթռչի յաղաթս ձեր զՄկրտիչ քահանայ զփծուն գրիչս, և զսոքա Բ զաւակս իմ զՈվաննէսն և զԶաքարէն, և զհայրն իմ զԳրիգոր Քահանայ, և զեղբայրն իմ զՍտեփանոս քահանայ, և Աստուած, որ առաւ է ի տուրս բարեաց, ձեզ ողորմեսցի յալուրն դատաստանի, ամեն: Յիշեցէք զհայրն իմ ըստ մարմնոյ Զաքարէն, և զմայրն իմ զԷլիաթունն, և զայլ արեան մերձավորսն մեր, և որ զմեզ յիշէ Աստուած զինք յիշէ, ամեն: Արդ գրեցաւ ի թվ. Հայոց ՊԲ (820+551=1371), ի դանություն Ռիսին»²³:

Այս տվյալներից ելնելով՝ կարող ենք ենթադրել, որ Յովաննէս Խիզանցին ծնվել է XIV դ. վաթսունական թվականներին և XIV դ. ութսունական-իննսունական թվականներին արդեն բավական վարժ և ճանաչված գրիչ ու մանրանկարիչ էր: Ինչը վկայում է նաև այն մասին, որ Յովաննէս Խիզանցուն

¹⁹ Leyloyan-Yekmalyan A. L'Art... P. 159 (tableau généalogique I).

²⁰ Մկրտիչ և Ստեփանոս քահանաների վերաբերյալ տես Leyloyan-Yekmalyan A. L'Art... P. 187 (M-XIV-3), 201 (S-XIV-4):

²¹ Հակոբյան Հ., Վասպուրականի..., էջ 84:

²² Ավետիսյան Ա., Մանրանկարիչ..., էջ 6:

²³ ՄՄ 6036, տես Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 498):

վերագրվող բոլոր այն ձեռագրերը, որ թվագրված են 1380–1390-ական թթ. առաջ, կամ թվագրման, կամ էլ վերագրման խնդիր ունեն²⁴:

Վերադառնանք BnF 333 Քառավետարանի թվագրման հարցին: Ինչպես վերը նշեցի ձեռագրում պահպանվել են մի շարք հիշատակարաններ: Մատյանի 275բ - 276ա թերթերին է գրված գրչի հիմնական հիշատակարանը²⁵, որը թեպետ և նշում է 1335 թվականը որպես ձեռագրի ստեղծման տարի, ամբողջական չէ և կրում է մի շարք բացեր.

«...Եւ է ի մարդեղութենէ բանին Աստուծոյ անս ոյլն (1335), իսկ ըստ թոռոյ խոսորովային յարեթեանս տումարի: [...բաց] Ի կաթողիկոսութեան հալյ կազանց սեռի. տկառն ըստ կիլիկեցոյ: [...բաց] արհի եպիսկոպոսութեան տէր զաքարիայի ախթամարեցոյ: Զոր տէր ախտուած պահեսցէ անասանելի գաթոռ հայրապետական և զթագաւորական»:

Ուշագրավ է, որ գրիչը բաց է թողել թիվն ըստ հայկական տոմարի, Կիլիկիո կաթողիկոսի անունը, սակայն նշել է 1335 թվականը և Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսի անունը: Նախքան մյուս մանրամասներին անդրադառնալը հարկ եմ համարում նշել, որ հիշատակարանում հստակորեն ընթերցում ենք ՌՅԼԵ (1335) թվականը, և տարբեր հեղինակների կողմից առաջարկված 1336 և 1337 թվականները հիշատակարանի վատ ընթերցման արդյունք են: Հատկանշական է նաև որ Զաքարիա Աղթամարցու անունից առաջ նույնպես ազատ տեղ է թողնված: Ա. Ուզունեանի կարծիքով՝ գրիչն այստեղ բաց է թողել «Եւ ի մերոյ» կամ «ի մերոյ» բառերը²⁶:

Յովաննէս Խիզանցի գրչից ձեռագրում պահպանվել է մեկ այլ, շատ ավելի կարճ հիշատակարան Մատթեոսի Ավետարանի վերջում (թ. 89բ).

«Քրիստոյս ախտուած քո սուրբ անտարանչի բարեխոսութեամբդ, ողորմեայ յովաննէս քահանայի, ստացողի սուրբ ավետարանիս, և ծնողաց իւրոց. և [...բաց] և յուրոցն ամենայն: Ըստ նոցին և ինձ մեղապարտի և անարհեստ գրչի յոյլախիսի:- Թիւ Հայոց: [...բաց] Եւս առավել ողորմեայ քրիստոյս ստացողի սորա յովաննէս քահանայի, քանզի յոյժ տենչանաւք ցանկայր սուրբ ավետարանիս առնել զսա յիշատակ իւրն անջինջ, և ծնողացն իւրոց: Եւ արժանացոյ զնայ և զծնողան նորայ սովա փառավորել զքեզ քրիստոյս. Այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից: ամեն»²⁷:

²⁴ Այդ թվում Երուանդ Լարաբանի նկարագրած Ավետարանը (1336), (տե՛ս *Լարաբան Ե.*, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, հմր. 95, սյուն 193–196): Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի հմր. 404 (172) Ավետարանը (1362), (տե՛ս *Տէր-Աւետիսեան Ա.*, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 224–225): Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Յարութին Քիւրտեան Հավաքածուի հմր. 224 Ավետարանը (1368), (տե՛ս *Հակոբյան Հ.*, Վասպուրականի..., գլուխ Գ, տողատակ 4, էջ 143): Յարութին Քիւրտեանի նկարագրած Ժողովածուն (1371), (տե՛ս *Քիւրտեան Յ.*, Խիզանի դպրոցի գրիչներն ու մանրանկարիչները, Փարիզ, 1951, էջ 16–17):

²⁵ *Kevorkian R. H., Ter Stepanian A.* Manuscripts arméniens... P. 938-940; *Ouzounian A.* Notes à propos du manuscrit arménien de Paris № 333 // *REArm.* 2011. Vol. 33. P. 23.

²⁶ *Ouzounian A.* Notes à propos... P. 23. № 10.

²⁷ Այս հիշատակարանը գրանցված չէ ձեռագրացուցակում և առաջին անգամ հրատարակել է Ա. Ուզունեանը, տե՛ս *Ouzounian A.* Notes à propos... P. 24–25.

Ինչպես տեսնում ենք, կրկին բաց թողնված տեղեր կան: Փորձենք հասկանալ թե՛ ի՞նչը կարող էր պատճառ հանդիսանալ գրչի կողմից միտումնավոր արված այդ բացթողումներին:

Ամենայն հավանականությամբ հիշատակարանում նշված ոչ միայն 1335 թվականը, այլև Տեր Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսի անունը Յովաննես Խիզանցու կողմից ընօրինակված են մայր օրինակից: Բայց, եթե բնօրինակում խոսքը Զեքարիա Ա կաթողիկոսի մասին էր (1296–1336), ապա Յովհաննես Խիզանցին գրում է Զեքարիա Բ կաթողիկոսի մասին, որին կոչում են նաև Զաքարիա Նահատակ (1369–1393): Զեքարիա Աղթամարցի կաթողիկոսի անվանից առաջ ազատ թողած հատվածը ամենևին էլ բացթողում կամ վրիպակ չէ: Այն մատնանշում է, որ գրիչը մտադիր էր, ավելի ուշ, լրացնել կամ ճշտել կաթողիկոսի վերաբերյալ իր հաղորդած տեղեկությունը: Ուշագրավ է, որ Կիլիկիո կաթողիկոսի անվան փոխարեն Յովաննես Խիզանցին կրկին ազատ տեղ է թողել: Բնականաբար, գրիչը չէր կարող չիմանալ իր ժամանակակից կաթողիկոսի անունը: Յովաննես Խիզանցու հիշատակարանում տեղ գտած այս բազմաթիվ բացերը հուշում են, որ ձեռագիրն ստեղծվել է իրադարձություններով հարուստ ու երերուն շրջանում: Նրա լուրջությունը ակնհայտորեն վկայում է կաթողիկոսի բացակայության կամ էլ անցումնային շրջանի մասին: Նման իրավիճակ էր տիրում Հայոց աշխարհում 1392–1393 թթ., երբ նախ, 1392-ին Սիսում դավանաբար սպանվում է Թեոդորոս կաթողիկոսը, ապա 1393-ին Ոստանում դաժանաբար նահատակվում է Տեր Զաքարիա Աղթամարցին: Այդ մասին մի շարք վկայություններ են պահպանվել 1392–1393-ին ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում: Ահա թե ինչպես է ներկայացնում իրավիճակը Յովաննես Խիզանցու ժամանակակից Գրիգոր Խլաթեցին. «Այլ զի և կաթողիկոսն մեր զերկոսին սպանին ի միում ամի: Հերոս զտէր Թէոդորոսն ի Սիս սպանին, և մինչդեռ տարին չէր վճարել՝ զտէր Զաքարիայն ի յՈստան քարկոծ արարին, թող զայլ նեղութիւնս, զոր ընդ մեզ անցուցանեն»²⁸:

Գրեթե նույն տեղեկությունն է հաղորդում նաև Թովմայ Մեծովեցին. «Այս ամիր Եզդինս, որ հակառակ եղև Յուսուֆին, տէրն Ոստանայ, ի ՊԽԲ (1393) թվականին սպան զկաթողիկոսն Աղթամարայ զտէր Զաքարիա անուն: Զտրին պատմութիւնն տեսցես ի զիրս Յայսմաւորաց սուրբ վարդապետին Գրիգորի: Եւ յանցեալ ամին զտէր Թէոդորոսն՝ զՍրսայ կաթողիկոսն ԺԶ (16) տանտուէրօք սպան ի նենգութենէ քրիստոնէիցն սրսայ պիղծ մելիք Օմարն: Եւ սուլթանն Մարայ սպան զմելիք Օմարն՝ չարաչար մահուամբ և դառն տանջանօք: Փառք Աստուծոյ»:

Ամենայն հավանականությամբ Յովաննես Խիզանցին տեղյակ է եղել Սիսում Թեոդորոս կաթողիկոսի սպանության մասին, սակայն աշխատանքը սկսել է 1393 թվականին նախքան Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսի նահատակվելը: Միգուցե այդ է նաև պատճառը, որ Յովաննես Խիզանցին Զաքարիա Աղթամարցու անվանից առաջ բաց է թողել «Եւ ի մերոյ» կամ «Բ մերոյ» բառերը, քանի որ Սիսում Թեոդորոս Բ Կիլիկեցու սպանությունից անմիջապես հետո մինչև Կարապետ Ա Կեղեցի կաթողիկոսի ընտրվելը (1392–1404), Վասպուրականի

²⁸ Աւետարան, (1393), տե՛ս Խաչիկյան Լ., ԺԴ դարի..., էջ 599–601:

գրչի ու մանրանկարչի համար Զաքարիա Աղթամարցին Հայոց Եկեղեցու միակ կաթողիկոսն էր:

Յո՛ւն 333 Քառավետարանում Յովաննէս Խիզանցի ծաղկողի հիշատակարանը գետնդված է «Տեառնըդառաջ» մանրանկարում (նկ. 1)²⁹: Հիշատակարանը անթվակիր է, բայց հաղորդում է մի շարք կարևոր փաստեր իր ընտանիքի անդամների մասին, ինչպես նաև իր բարի վարդապետի՝ Ստեփանոսի մահվան մասին.

«Զսուտանուն ծաղկողս զյ[ո]վ[ա]յ[ն]նէս) և անարժան աղաչեմ զձեզ յիշել արքրիստոյս աստուած, որ զա[ստուա]ծային ս[ուր]բ տնարինականս նկարեցի անարժան ձեռաք իմովք և զվարդապետն իմ, և զբարի ք[ա]յ[ի]սանայն զստեփանոս զփոխեալն ի քրիստոյս: Նաև զամենեսեան յիշեսցիք որ աշխատեցան) վ[ա]յ[ն]նէս) իմ: Յիշեցէք ի քրիստոյս և զհայրն իմ զմկրտիչ ք[ա]յ[ի]սանայ) և զմայրն իմ և զմեծ մամն իմ և զեղբարսն իմ զփոխեալսն ի քրիստոյս զկարապետ և զյոհաննէսն: և ա[ստուա]ծ զձեզ յիշեսցէ»:

Յովաննէս Խիզանցու հիշատակած Ստեփանոս վարդապետը Մովսէս Մեծփավանեցու աշակերտ՝ Ստեփանոս փիլիսոփան է³⁰: Վերջինս հիշատակվում է հաճախ իր հոգևոր եղբոր՝ նույնպես Մեծփավանքի աշակերտ Յովհաննէս Մեծփեցու հետ³¹: Երկուսը միասին 1373-ին մեկնել են Որոտնավանք՝ աշակերտելու Յովհաննէս Որոտնեցուն: Ստեփանոսը վարդապետական աստիճան է ստացել երեք տարի անց և 1377–78-ին վերադարձել է Քաջբերունիք: Ինչպես Թովմայ Մեծփեցին է վկայում. *«ես նմա զառազան իշխանութեան զալ մխիթարել զբազմութիւն քրիստոնէիցն և վանորէիցն անխրատից, զի անտերունչ էր զաստն այն»*³²: Հայրենիքում նա բուռն գործունեություն է ծավալում, օժանդակում Մեծփավանքի առաջնորդ Ներսէս եպիսկոպոսին³³: Ինքը՝ Ստեփանոս վարդապետը, պատմելով գերեվարության ու կոտորածի սարսափից Քաջբերունյաց երկրի հայ բնակչության դեպի Տարօն կատարած փախուստի մասին՝ գրում է. *«Եւ ես Ստեփանոս վարդապետ Մեծյորեցի և Ներսէս եպիսկոպոսն զփախստական քրիստոնայքն հանար ի սուրբ Կարապետ վանս զի Թամուրն քաղցր աչօք էր հայեալ ի յԱբկար եպիսկոպոսն»*³⁴:

²⁹ Նման օրինակները շատ են Խիզանցու այլ ձեռագիր Ավետարաններում. Նոր Զուղա թիվ 404 /172 (թ. 2ա): ՄՄ 4223 (թ. 3ա): ՄՄ 5562 (թ. 5բ): ՄՄ 5727 (թ. 5ա): ՄՄ 5444 (թ. 8ա), տե՛ս նկ. 2–6:

³⁰ Ստեփանոս վարդապետի անունը գիտական շրջանառության մեջ է մտել զանազան ուղղագրությամբ՝ Ստեփաննոս կամ Ստեփանոս: Սույն հոդվածում ընդունվել է Ստեփանոս ձևը, ինչպես գրված է Յո՛ւն 333 ձեռագրի հիշատակարանում:

³¹ Ստեփանոս և Յովհաննէս Մեծփեցիների մասին՝ տե՛ս *Մայթուսյան Ա.*, Մեծփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.), Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 1997, էջ 53–61:

³² *Թովմա Մեծփեցի*, Պատմագրություն / աշխ. Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 86:

³³ Խոսքը Մեծփավանքի առաջնորդ Ներսէս եպիսկոպոսի մասին է, որը Թովմայ Մեծփեցու վկայությամբ, եղել է Մեծփավանքի հետագա առաջնորդ Յովհաննէս վարդապետին քահանա ձեռնադրողը. *«Եւ տեսեալ զնա հեզահողի և արբազան արհեսպիսկոպոսն տէր Ներսէս կոչեն զնա յաստիճան քահանայութեան և նա ետ զանձն իր ընծայ Աստուծոյ...»*, տե՛ս *Թովմա Մեծփեցի*, Պատմագրություն... էջ 85:

³⁴ ՄՄ 9832 (տե՛ս *Խաչիկյան Լ.*, Հայ պատմագրության անհայտ էջերից, ՊԲՀ, 1972, № 4, էջ 232): Ըստ Լ. Խաչիկյանի ՄՄ 9832 ձեռագրի մեջ է պահպանվել Լենկ Թամուրի 1386–1387 թթ. արշավանքի մասին հենց այն սկզբնաղբյուր-պատմությունը, որն իր ձեռքի տակ ունեցել և լայնորեն օգտագործել է Թովմայ Մեծփեցին: Վերջինս հարստացրել է իր օգտագործած սկզբնաղբյուրը, ճշտել ու լրացրել հավելյալ տեղեկություններով: Ձեռագրում կա նաև մի փոքրիկ պարբերույթ Լենկ Թամուրի երկրորդ արշավանքի մասին (տե՛ս *Խաչիկյան Լ.*, Հայ պատմագրության...):

Ինչ վերաբերում է Յովհաննէս Մեծփեցուն, ապա նա Որոտնավանքում է մնացել շուրջ տասներկու տարի: Որոտնեցու մահից հետո վարդապետական աստիճան է ստացել Գրիգոր Տաթևացուց և Քաջբերունիք վերադարձել միայն 1386–87-ին³⁵: Ամսիջապետ ձեռնամուխ է եղել Մեծփավանքի վերաշինութեանը, բայց իմաստուն ճարտարապետի բացակայության պատճառով աշխատանքները հետաձգվել են. «*Եւ քարոզութեամբ անտարանին վարդապետութեան լուսաւորեաց զշրջակայսն Վասպուրական գաւառիս: Մանավանդ ճգնաւորական վարուք և տընութեամբ անցուցանէր զկեանս իւր, մինչ զի գամենայն ժամանակս իւր զգլուին ոչ եղ ի սնարս, այլ զիրս ի ձեռին ունելով, այնու անցուցանէր զպանդխտութիւն կենցաղոյս դառնութեան»³⁶: Ստեփանոս վարդապետի մահից հետո Յովհաննէս Խիզանցին համագործակցում է նաև նրա ընկերակից և հոգեվոր եղբայր Յովհաննէս Մեծփեցուն: 1395-ին, Յուսուփի հարձակման ժամանակ, Յովհաննէս Մեծփեցին իր աշակերտներով ապաստանում է Ռշտունյաց գավառում: Իսկ 1397-ին «...ստաքեաց Թամուր շէխ Ահման անուն չաղաթայ յաշխարհս մեր և նա եկեալ ի խնդիրել վարդապետացն մերոց՝ մեծին Սարգսի Սորբեցոյ և Յովհաննէս վարդապետին՝ Մեծփայ վանից առաջնորդին և շինեաց զաշխարհս մեր աստի և անտի ժողովելով, և յոյժ բարեբարոյ և քրիստոնէատէր գլով: Եկին ամենայն ցրուեալքն, և սկիզբն արարին շինութեան, և ծաղկեցաւ ուսումնականօք ի ձեռն խաղաղութեանն և ողորմութեանն Աստուծոյ ԺԱ (11) ամ ամենայն ծովաբորորս»³⁷: Տասնմեկամյա այս խաղաղության շրջանին է վերաբերում նաև Յովհաննէս Խիզանցու և Յովհաննէս Մեծփեցու համագործակցությունը: ՄՄ 346 ձեռագիրը 1390-ին ընդօրինակել է Պետրոս Աբեղան Մանուկ Սուրբ Նշան անապատում՝ Յովհաննէս Բարունապետի պատվերով: Ավելի ուշ նրա աշխատանքը շարունակել է Մեքէւեդ գրիչը: 1400-ին ձեռագիրը լրացրել և պատկերազարդել է Յովհաննէս Խիզանցին Յովհաննէս Մեծփեցու պատվերով: Նրա թողած բազմաթիվ հիշատակարանները, ինչպես օրինակ՝ «*Յովհաննէս վարդապետին է սա, անարժան Յովանիսի ձեռամբ ծաղկեալ»*³⁸ կամ «*Յանարժան Յովանիսէ ընծայ սուրբ վարդապետին Յովհաննու յիշեցէք զմեզ ի Բրիստոս Յիսուս»*³⁹, նաև Յովհաննէս վարդապետի ու Յովհաննէս Խիզանցու մանրանկարները (նկ. 11 և 12) նրանց համագործակցության վաղ ապացույցներն են:*

Քաջբերունյաց գավառի անվանի եկեղեցական գործիչներ Ստեփանոս և Յովհաննէս Մեծփեցի վարդապետների ծավալած բուռն գործունեությունը արտացոլվել է ժամանակի գրքարվեստում: Բազմաթիվ այլ ձեռագրերի թվում նրանք հիշատակվում են նաև Սատենադարանի թիվ 3717 Բառավետարանում. «*Արդ աղաչեմք զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, յիշեցէք ի Բրիստոս և ի սուրբ յաղաթս ձեր [զստացող սորա]՝ զԹաղէոս կրանաւորն, և ծնաւորն իւր, և գամենայն արեան մերձաւորն իւր, զվարդապետ՝ Ստեփաննոս Փիլիսոփայն, և զեղբայրն՝ զՅոհաննէս վարդապետ, որ բազում աշխատութեամբս ուսուցին զԹաղէոս...*»⁴⁰:

³⁵ Թովմա Մեծփեցի, Պատմագրություն..., էջ 86–87:

³⁶ Նույն տեղում, էջ 88–89:

³⁷ Նույն տեղում, էջ 74:

³⁸ ՄՄ 346, թ. 1բ:

³⁹ ՄՄ 346, թ. 219բ:

⁴⁰ Խաչիկյան Լ., ԺԴ դարի..., էջ 597–598:

Ձեռագիրը ընդօրինակվել է 1392-ին Քաջբերունիքի Նվնդի Նորշինա գյուղի մերձակայքում գտնվող Մանուկ Սուրբ Նշան անապատում գրիչ Պետրոս արեղայի կողմից: Այն փաստը, որ 1392-ին Պետրոս արեղան հիշատակում է Քաջբերունիքի վարդապետներ Ստափանոսին և Յովհաննեսին, վկայում է, որ Ստեփանոս վարդապետը մահացել է 1392-ից հետո: Երկու տարի անց՝ 1394-ին, Տէր Թաղէոս կրոնավորի համար մատյանը պատկերագարդել է Յովաննէս Խիզանցին. «*Չստացող սուրբ Աւետարանիս գտէր Թաղէոս կրանատրն և ամենայն սրբոց մաղթանաք զիս՝ զանարժան և գունտանուն ծաղկող զՅովաննէս և զձնողնս իմ*»⁴¹: Հատկապես ուշագրավ են Յովաննէս ծաղկողի երկու կարճ հիշատակարանները, գրված «*Կոտորումն մանկանց*» ու «*Մկրտություն*» (թ. 9բ) և «*Թաղում*» ու «*Հարություն*» (թ. 13ա) մանրանկարների էջերի ստորին լուսանցքներում: Առաջինում նա տեղեկացնում է հոր մահվան մասին. «*Ով իմ եղբարք և սիրելի | սուրբ Ք[ա]հանայք հոգով ի յի, | ձեզ բան մի ասեմ զարմանալի, | թէ ձեռս իմ ո[ր]յալ[ես] կու շարժի, | զի հայրն իմ էր Քաղցր ու բարի, | ի յանուանէ յոյժ գովելի, | ինձ ինամատար և բերկրալի, | ի յայսմ ամի առ Տ[է]ր փոխի: | Այլ աղաչեմ աղերսալի, | այտրս ոտից ձեզ խոնարհի, | որ բոլորով սրտիս բարի, | նմայ ասացիք Տ[է]ր ողորմի: | Վա զիս ո'հ, ո'հ, և ինձ ախմար յոյժ ծաղկողի*» (թ. 9բ): Երկրորդում, Յովաննէս Խիզանցին հաղորդում է, որ հայրը մահացել է 1394-ին, ինչպես նաև նկարագրում է այն ան ու խուճապը, որ տիրում էր Լենկ Թամուրի երկրորդ արշավանքի լուրը ստացած և փախուստի ճանապարհը բռնած ժողովրդին, որոնց մեջ էր նաև ինքը. «*Վայ ատրս և ժամոս թէ որպէս շար համբաւ առաք՝ որ ձեռս թույացաւ, միտս կուրացաւ և ամենայն անդամաւքս դողամ. զի անօրէն Լանկ Թամուրն գայ ասեն. սպանողն և արինսարբո գազանն. որ ամ [ենայն] մարդ՝ թ[ա]զ[ա]վոր] և իշխան դողան ի յահէն նորա, զի ոչ ոք դիմանայ նմա: Վասն որոյ անմեղադիր լինել աղաչեմ զձեզ անարհեստ ծաղկիս, զի ի բնական տրտմութեն] էս վերայ գոր նախ գրեցաւ յաւել և այս ևս և ոչ կարացաք ըստ մերում տկարութեն] էս զառաւել լան առնել. Այլ փախուցեալք ի լերինս և յառապարս և ի ձորս երկրի. երանի տայաք փոխելոցն յաստեացս, զի ոչ գոյր համբաւ բարի և այժմ ոչ զհտեմք զգիարդն: Ո'հ, ո'հ, ո'հ: Զհայրն իմ զՄկրտիչ ք[ա]հ[անայ] յիշեցէք ի Ք[րիստո]ս անմոռաց աղաչեմ. թ. ՊԽԳ (843+551=1394)» (թ. 13ա):*

Լենկ Թամուրի երկրորդ արշավանքի ժամանակ Կոզովիտ գավառում էին ապաստանել նաև Մեծոփավանքի վարդապետներն ու աշակերտները: Նրանց թվում էր Թովմա Մեծոփեցին, որը վկայում է 1394-ին մեկ այլ դառը կորստի՝ Ստեփանոս վարդապետի մահվան, մասին. «*...Եւ Քրիստոնեայքն սուր ի վերայ եղեալ գեհին, և բաժանեալ միմեանց, պաշար առեալ՝ յերկիրն Քաջբերունեաց հասինք հանդերձ վարդապետօք և եպիսկոպոսօք և քահանայիք և ժողովրդովք, և կեկալ հասաք ի գաւառն Կոզովիտ ի գեղն Դարօն: Եւ անդ հանգաւ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ աշակերտ մեծին Յովհաննու Որոտնեցոյ, ընկերակից սուրբ վարդապետին Յովհաննու Մեծոփայ*»⁴²:

⁴¹ ՄՄ 3717, թ. 7բ:

⁴² Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն..., էջ 69–70:

Վերը նշված բոլոր մանրամասները վկայում են, որ BnF 333 Քառավետարանը Յովաննէս Խիզանցին ընդօրինակել է 1393 թ. Խիզանում. «*ընդ հովաննէս Սրբոց Խաչին և Գամաղիելի առաքելոյն և առ ոսոս Սրբոյ Աստուածածնին և Սրբոց Զարավարացն Սարգսի և Գէորգեայ...*»⁴³, նախքան Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսի նահատակվելը: Ըստ Գրիգոր Խլաթեցու Զաքարիա Աղթամարցուն սպանել են 1393-ի փետրվարի տասնինգին⁴⁴:

Ձեռագիրը գրվել է «...*ի վայելումն հավատարիմ և պատուելի քահանային Յովաննէս կոչեցեալ*»⁴⁵: Հավանաբար խոսքը Մեծոփավանքի քահանա Յովաննէսի մասին է, որին հիշատակում է նաև Գրիգոր Խլաթեցին 1393-ին. «*Արդ, աղաչեմ զամենեսեան, որք պատահէք ամա տեսութեամբ կամ ազտութեամբ, յիշման արժանի արարէք զվերոյյառեալ պատուական քահանայն զՅոհաննէս, որ ստացաւ զսուրբ ավետարանս ի հալայ արդեանց և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց՝ Ստեփանոս քահանայի, և ամուսնոյն Յովաննիսի՝ Ուսլոյի*»⁴⁶: Նույն Յոհաննէս քահանան հիշատակվում է Յովաննէս Խիզանցու երկու այլ ձեռագրերում՝ Մատենադարանի թիվ 4223 և 5562 Քառավետարաններում: Առաջինի գրիչն է Յովաննէս Խիզանցու եղբայրը՝ Զաքարիան (Զաքարէն), որն իր հիշատակարանում գրում է. «...*յիշեցէք ի Բրիստոս զստացաւ սուրբ անտարանիս զԱստուածատուր քահանայ, և զհայրն իւր զՎասիլն և զնայրն իւր զԽոնդի-Խաթուն, և զկենակիցն իւր զԷլիսաթունն, և զծաղկեալ զաակն իւր զՅովաննիսիկն, և զամենայն արեան մերձաորսն իւրեանց, զբոյրն իւր՝ զՏիկին-Խաթունն, և զքերորդին իւր զԹումա քահանայն, որ իբրև զարեգակն փայլէր ի մէջ աստեղաց և լուսաորէր զամենայն մարդիկ զհոտութեամբն իւրով, որ տղա հասակաւ փոխեցաւ ի Բրիստոս և սուգ անմխիթօք եթող ծնողաց իւրոց, զի զնա միայն ոնէին ի բազում զաակաց իւրեանց և ի նմանէ այլ զրկեցան, և զծերունի հայրն իւր զՅովաննէս քահանայն, որ կսկծամահ եղև և հանգաւ ի Բրիստոս, և զամենեսեան, որք աստ յիշեցան...*»⁴⁷: Զաքարիա Խիզանցու հիշատակարանը գրված է 1401-ին: Մեկ տարի անց, 1402-ին, Յովաննէս Խիզանցին ամենայն հավանականությամբ ավարտում է Մատենադարանի թիվ 5562 Քառավետարանը, որը գրվել էր «*ի վայելումն Յոհաննէս քահանային և Սուրիաս քահանային՝ քերորդոյն իւրոյ, և ի յիշատակ հոգոց իւրեանց և հոգոյ Թումայ քահանային որդո Յոհաննէս քահանային, որ մատաղ հասակաւ փոխեցաւ ի Բրիստոս: Եւ կացցէ այս ընդ իշխանութեամբ Սուրիաս քահանայի, քերորդոյն Յոհաննէս քահանայի...*»⁴⁸: Հատկապես ուշագրավ է «*Չորեքկերպեան աթոռք*» (թ. 10ա) հորինվածքի ստորին հատվածում ներկայացված Յոհաննէս քահանայի ընտանիքը պատկերող մանրանկարը որում «*յոհաննէս քահանայն և կենակիցն իւր աղաչեն զստուաթ վասն թողութեանն մեղաց իւրեանց և ծնողացն*»:

⁴³ BnF 333, թ. 276բ, տե՛ս Kevorkian R. H., Ter Stepanian A., Manuscripts arméniens... P. 940.

⁴⁴ «*Բ հնգետասան արին մեհեկի, չորերշաքթին, Էկին պատեցին զվեր տըրն և յստեան մահո մասունեցին*», Ավետարան, (1393), տե՛ս Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 600:

⁴⁵ BnF 333, թ. 276բ, տե՛ս Kevorkian R. H., Ter Stepanian A., Manuscripts arméniens... P. 940.

⁴⁶ Ավետարան, (1393), տե՛ս Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի..., էջ 599:

⁴⁷ ՄՄ 4223, թ. 296ա, տե՛ս Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի..., էջ 9:

⁴⁸ ՄՄ 5562, թ. 309բ, տե՛ս Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի..., էջ 22:

Նրանց հանգուցյալ որդու նկարին կից գրված է՝ «*Ես յոհաննէս ք[ա]հ[անայ]իին որդի՛ եմ Թումայ ք[ա]հ[անայն] որ տարածամ փոխեցայ ի Քրիստոս ոհ՛ ոհ՛ ոհ՛*» (նկ. 9 և 10): Այսպիսով տեղեկանում ենք նաև, որ BnF 333 Քառավետարանի պատվիրատուն՝ Յոհաննէս քահանան մահացել է 1401-ին, որդու՝ Թումայ քահանայի, տարածամ մահվան կսկծից:

Յովաննէս Խիզանցին ձեռագիրը պատկերազարդել է ընդօրինակելուց մեկ տարի անց՝ 1394-ին: Ինչպես վերը տեսանք, Ստեփանոս վարդապետը, որի մահվան մասին նշում է Յովաննէս Խիզանցին իր մանրանկարչի հիշատակարանում, Ստեփանոս Մեծովեցին է: Վերջինս մահացել է 1394-ին Կոզովիտ գավառի Դարա գյուղում: Մատենադարանի թիվ 3717 Քառավետարանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Յովաննէս Խիզանցու հայրը նույնպես մահացել է 1394-ին: Հետագայում գրած կամ պատկերազարդած իր ձեռագրերում Յովաննէս Խիզանցին միշտ նշում է հոր մահվան մասին: Ուշագրավ է, որ BnF 333 Քառավետարանում նա ոչինչ չի գրում այդ մասին: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ ձեռագիրը նկարազարդվել է 1394 թվականին՝ Ստեփանոս վարդապետի մահվանից հետո մինչև իր հոր Մկրտիչ քահանայի մահն ընկած ժամանակահատվածում:

Հիշատակարանային այս բոլոր տվյալների ուսումնասիրությունը ոչ միայն բացահայտում է 1393–1394 թվականները, որպես BnF 333 Քառավետարանի ընդօրինակման և պատկերազարդման շրջան, այլև հասկանալի է դարձնում, թե ինչ պայմաններում է այն ստեղծվել: Յովաննէս Խիզանցու հիշատակարաններում տեղ գտած բացերը մատնանշում են, որ հեղինակը, ինչ-ինչ պատճառներով չի կարողացել ավարտել իր աշխատանքը եւ վերջին ստուգաբանված տեղեկություններով լրացնել եւ թվագրել ձեռագիրը:

Anna Leyloyan-Yekmalyan

*INALCO, Centre de Recherches
Europes-Eurasie
Paris*

**La datation du manuscrit №333
de la Bibliothèque nationale de France**

D’après le colophon du manuscrit arménien Paris BnF 333, il a été copié en 1335 à Xizan, par le scribe Yovannēs, sous l’archiépiscopat de Tēr Zak’aria Ašt’amarç’i. Le scribe précise aussi le nom de l’acquéreur, Yovannēs kahanay. En revanche, le copiste n’a mentionné ni la date selon l’ère arménienne, ni le nom du catholicos de Cilicie. Ce Tétraévangile est l’un des dix sept manuscrits attribués à Yovannēs

Xizanc'i, fils de Mkrtič' K'ahanay. Ce dernier n'ayant pas pu travailler en 1335, il convient donc de s'interroger sur la date réelle du manuscrit.

Cette étude met en évidence que Yovannēs Xizanc'i à copié le Tétraévangile BnF 333 en 1393 avant la mort de Tēr Zak'aria Att'amarc'i II (1369–1393) et enluminé l'année suivante, en 1394, après le décès de Stap'annos vardapet Mecop'ec'i, mais avant la mort de son père Mkrtič' K'ahanay, décédé également en 1394. La date réelle du manuscrit est donc 1393–1394.

Анна Лейлоян-Екмалян

*Национальный институт восточных
языков и цивилизаций
Париж*

К вопросу о датировке рукописи под номером 333 в собрании Парижской национальной библиотеки

Армянское Четвероевангелие № 333 Парижской Национальной библиотеки (BnF 333) была написана и иллюстрирована в городе Хизане в монастыре Св. Гамалиила (Сурб Гамалиэл), священником Иоаном (Ованнес каана). Согласно памятной записи, рукопись была создана в 1335 г., при архиепископе Захарии Ахтамарском (Ахтамареци). Примечательно, что запись не является полной и имеет ряд пропусков: например, дату согласно армянскому летоисчислению и имя католикоса Киликийской Армении.

Поскольку парижское Четвероевангелие является одной из семнадцати рукописей, приписываемых известному писцу и миниатюристу Васпураканской школы Иоанну Хизанскому, сыну священника Мкртыча, работавшего в конце XIV в., то возникает вопрос относительно реальной даты создания рукописи.

Исследования памятных записей выявили, что Четвероевангелие было скопировано писцом и миниатюристом Иоанном в 1393 г., при архиепископе Закарии II Ахтамарском (1369-1393). Рукопись была иллюстрирована Иоанном в следующем, 1394 г., после смерти его наставника вардапета Степаноса Мецопского, но до смерти его отца Мкртыча, когда рукопись была украшена сюжетными миниатюрами, маргиналиями и т. д. Однако датировка, указывающая на 1335 г., является неверной, так как она относилась к рукописи, послужившей прототипом для Четвероевангелия № 333.

Նկարների ցանկ

- Նկ. 1. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (BnF 333, 1393–1394 թթ., թ. 3ա)
Նկ. 2. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (Նոր Զուղա, № 404 /172, 1392–1402, թ. 2ա)
Նկ. 3. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (ՄՄ 4223, 1401 թ., թ. 3ա)
Նկ. 4. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (ՄՄ 5562, 1401 թ., թ. 3ա)
Նկ. 5. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (ՄՄ 5727, 1404 թ., թ. 5ա)
Նկ. 6. Յովաննէս Խիզանցի, Տեառնընդառաջ (ՄՄ 5444, 1417 թ. թ. 8ա)
Նկ. 7. Յովաննէս Խիզանցի, Յովհաննէս վարդապետ (Մեծոփեցի) և Յովաննէս քահանա (Խիզանցի, ՄՄ 346, 1390–1400 թթ., թ. 1բ)
Նկ. 8. Յովաննէս Խիզանցի, Յովհաննէս վարդապետ (Մեծոփեցի) և Յովաննէս քահանա (Խիզանցի), հատված (ՄՄ 346, 1390–1400 թթ., թ. 1բ)
Նկ. 9. Յովաննէս Խիզանցի, Չորեքկերպյան աթոռ (ՄՄ 5562, 1402 թ., թ. 10ա)
Նկ. 10. Յովաննէս Խիզանցի, Յովհաննէս Քահանա, զՏիկին-Խաթուն և Թումայ Քահանա, հատված (ՄՄ 5562, 1402 թ., թ. 10ա)
Նկ. 11. Յովաննէս Խիզանցի, Տիրամայրը մանկան հետ և Յովհաննէս վարդապետ Մեծոփեցի ու Յովաննէս քահանա Խիզանցի (ՄՄ 346, 1390–1400 թթ., թ. 441բ)
Նկ. 12. Յովաննէս Խիզանցի, Յովհաննէս վարդապետ Մեծոփեցի ու Յովաննէս քահանա Խիզանցի, հատված (ՄՄ 346, 1390–1400 թթ., թ. 441բ)



1



2



3



4



5



6



7



8



9



10



11



12